

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 25 Օգոստոսի, 2008

Հինգշաբթի Օգոստոսի 21-ին տեղի ունեցավ ՀՀ Արեւմտեան Ամերիկայի 45րդ Շրջանային պատգամաւորական ժողովը, որը աւարտուեց Կիրակի, Օգոստոսի 24-ի ուշ երեկոյեան: Ժողովը մանրամասնօրէն քննարկեց օրակարգի բոլոր կէտերը եւ ընդունեց համապատասխան բանաձեւեր՝ առաջիկայ երկու տարիների գործունեութեան համար: Ժողովի աւարտին ընտրուեց շրջանի կուսակցական աշխատանքները ղեկավարելու կոչուած Կենտրոնական կոմիտէի նոր կազմը: Տասնմէկ անդամներից բաղկացած նոր կազմում ընտրուեցին Աւետիգ Իգմիրլեանը (ներկայացուցիչ), Արամ Գալուստեանը, Ժան Գոսակեանը, Յովան Թաշճեանը, Յակոբ Թիւֆէնքճեանը, Գօգօ Թօփալեանը, Մարտիկ Կապուտեանը, Յարութ Մանուկեանը, Սեդո Պոյաճեանը, Սթիւ Տետչեանը եւ Յարութ Տօնոյեանը:



«Հայերը Օբամայի համար» կազմակերպութիւնը դրականօրէն է արձագանքել Միացեալ Նահանգների նախագահական թեկնածու Բարաք Օբամայի կողմից Սենատոր Ջոզէֆ Բայդընը փոխնախագահի պաշտօնի համար թեկնածու առաջադրուելուն: «Սենատոր Բայդընը հայանպաստ դիրքորոշումների անցեալ ունեցող քաղաքական գործիչ է, որը լրացուցիչ դեր է կատարելու Հայոց Տեղասպանութիւնը ճանչնալու եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքով լուծելու նախագահական թեկնածու Օբամայի գորաւոր յանձնառութեան ուղղութեամբ: Յիշեալ երկու ղեկավարները նաեւ կը կարողանան ղեկավարել Ամերիկայի Միացեալ Նահանգների ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը՝ անհրաժեշտ բարեփոխումներ իրագործելով երկրի տարածքով մէկ», նշել է «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան հաղորդագրութիւնը: Իսկ կազմակերպութեան նախագահ Արին Իպրանոսեանը աւելցրել է, որ իրենք մեծապէս խանդավառ են Սենատոր Բայդընին փոխ նախագահական թեկնածու առաջադրմամբ Օբամայի կողքին տեսնելով: «Հայանպաստ կեցուածքների նոյնանման անցեալ ունեցող երկու թեկնածուների միացեալ ընտրարշաւը մենք խիստ դրական ենք նկատում եւ այս իրողութիւնը համարում ենք իւրայատուկ հնարաւորութիւն մեր համայնքին համար», ասել է Իպրանոսեանը: Նշենք, որ Միացեալ Նահանգների օրէնսդրական մարմնում երկար տարիներ աշխատանք տարած Սենատոր Բայդընը հետեւողականօրէն նեցուկ է կանգնել ամերիկահայութեանը յուզող խնդիրներին, պաշտպանելով հայութեան շահերն ու դիրքորոշումները:



Հայ Օգնութեան Միութեան Կենտրոնական Վարչութիւնը վիրահայութեանը օժանդակելու նպատամտոյց ծրագրեր է մշակել՝ օգնութեան ձեռք պարզելու այն հայերին, ովքեր Վրաստանում բռնկած պատերազմական իրավիճակի հետեւանքով տեղահանուել եւ ներկայումս գտնուում են դժուարին պայմաններում: Վկայակոչելով Վրաստանում գործող իր յարակից մարմինները, ՀՕՄ-ը նշել է, թէ աւելի քան 100 հայ ընտանիքներ փախուստ են տուել Գորիի շրջանից եւ ապաստանել Ջաւախքում ապրող հայ ընտանքների մօտ: ՀՕՄ-ը կոչ է արել ամերիկահայ համայնքի բոլոր անդամներին, որ իրենց նուիրատուութիւնները կատարեն ՀՕՄ-ի Միացեալ Նահանգների տեղական միաւորներին կամ ուղարկեն ՀՕՄ-ի Կենտրոնական վարչութեան Գրասենեակը՝ հետեւեալ հասցեով.

ARS, Inc.
80 Bigelow Ave., Suite 300
Watertown, MA 02472



Օգոստոսի 10-ից 16-ը, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Թիքոյա բանակավայրում տեղի ունեցավ շրջանի ՀՄԸՄ-ի Սկաուտական 5-րդ ընդհանուր բանակումը: Ուրբաթ, Օգոստոսի 15-ին, որը նշանակուել էր որպէս այցելութեան օր էր, բանակավայրում տեղի ունեցավ սկաուտական հանդիսաւոր արարողութիւն, որին ներկայ

գտնուեցին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ արք.
Մարտիրոսեանը, ՀՄԸՄ-ի Նաւասարդեան 33-րդ մարզախաղերի պատուոյ նախագահ
Վահագն Թովմասեանը եւ բազմաթիւ հիւրեր ու ծնողներ: Միջոցառման ընթացքում տեղի
ունեցաւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» կրօնական շքանշանների տուգութիւն, որոնց արժանացան
են ութ ՀՄԸՄ-ականներ:



Օգոստոս 20-ին երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, Լուս Անջելոսում իր մահկանացուն է
կնքել ականաւոր գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Մերգելեանը: Հայաստանի
գիտութիւնների ազգային ակադեմիան եւ Գիտութեան պետական կոմիտէն իրենց
ցաւակցութիւնն են յայտնել անուանի գիտնականի մահուան տխուր առիթով՝ նրա մահը
նկատելով անդառնալի կորուստ համայն հայ ժողովրդի եւ առաջին հերթին Հայաստանի
գիտական հանրութեան եւ մտաւորականութեան համար:

Այս լուրերը տրամադրում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: